

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ԼՂՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից հաշվետու 2012թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթներով՝ 2012թ. ընթացքում քննել է թվով երկու գործ:

ԳԲԽ 01/12թ. բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից և քննության առնելով «Պետրոսյան» ՍՊԸ-ի կողմից 12.01.2012թ.-ին ներկայացված բողոքը՝ որչեց ներկայացրած բողոքը բավարարել: Արձանագրել «Արցախագազ» ՓԲԸ-ի կողմից «Գնումների մասին» ԼՂՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի, 35-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ինչպես նաև ԼՂՀ ֆինանսների նախարարի 2003 թվականի հուլիսի 21-ի թիվ 87 հրամանով հաստատված «Մրցույթի հայտերի գրանցամատյանի վարման» կարգի դրույթների խախտումների փաստերը:

ԳԲԽ 02/12թ. բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից և քննության առնելով «Ֆրենդս Շիփ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2012թ. ներկայացված բողոքը՝ ԼՂՀ Առողջապահության նախարարության կողմից «ԼՂՀ ԱՆ-ԲԸԱՊԶԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգը խախտումներով անցկացնելու մասին, որոշեց մերժել դիմումատուի բողոքը:

«Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ի պետ

Լ.Ոսկանյան